«ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՀԱՄԱՐ ՎԵԲ ԿԱՅՔԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ և ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀԿՓԲԸ-ՄԱԾՁԲ-18/09

ք. Երևան «02» 08 2018թ.

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Մ. Ջալալյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սայբեր Վիժն Դիվելոփմենթ Ստուդիո» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Պահլավունու, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **վեբ կայքի պատրաստման և ձևավորման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **860 000 (ութ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ**:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի*

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի

նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:

վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Հաշվարկային Կենտրոն» ՓԲԸ	«Սայբեր Վիժն Դիվելոփմենթ Ստուդիո» ՍՊԸ
ք. Երևան, Աբովյան 27	ք. Երևան, Հակոբ Հակոբյան 3
«Կոնվերս բանկ» ՓԲԸ	«Ամերիա բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930000600150100	Հ/Հ 1570027781220100
ՀՎՀՀ 01544167	ՀՎՀՀ 00173708
Մ. Ջալալյան _____	Մ. Պահլավունի _____
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1

«02» 08 2018թ. կնքված

ՀԿՓԲԸ-ՄԱԾՁԲ-18/09 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	72411300	Հավելված 1.1	հատ	860 000	1	ք. Երևան, Աբովյան 27, 3-րդ հարկ	2018թ. սեպտեմբերի 1-ը

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Հաշվարկային Կենտրոն» ՓԲԸ	«Սայբեր Վիժն Դիվելոփմենթ Ստուդիո» ՍՊԸ
ք. Երևան, Աբովյան 27	ք. Երևան, Հակոբ Հակոբյան 3
«Կոնվերս բանկ» ՓԲԸ	«Ամերիա բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930000600150100	Հ/Հ 1570027781220100
ՀՎՀՀ 01544167	ՀՎՀՀ 00173708
Մ.Ջալալյան	Մ. Պահլավունի
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1.1

«02» 08 2018թ. կնքված

ՀԿՓԲԸ-ՄԱԾՁԲ-18/09 ծածկագրով պայմանագրի

1. Հիմնական նպատակը

Վեբ կայքի ստեղծման և դիզայնի հիմնական նպատակն է «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի աշխատանքն ավելի թափանցիկ, հանրությանը և այլ շահագրգիռ կողմերին տեղեկատվությունը ավելի հասանելի դարձնելը:

2. Ծառայությունների շրջանակը

Հաղթող թեկնածուն (Մատակարար)՝ «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի ամբողջական հսկողության ներքո պատասխանատու է «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի վեբ կայքի դիզայնի և ստեղծման համար: Ծառայություններ մատուցողը պետք է «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի համապատասխան աշխատակազմին վերապատրաստի վեբ կայքի հետագա օգտագործումն իրականացնելու համար:

3. Սպասվելիք արդյունքները և կատարման ցուցանիշները

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի վեբ կայքի ամբողջական գործունեությունը կարգավորվում է համաձայն սույն Դրույթների և ՀՀ Կառավարության **«Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող նվազագույն պահանջները հաստատելու մասին»** 26.12.2013թ. թիվ 1521-Ն որոշման:

4. Գործառույթները

Վեբ կայքը պետք է հասանելի լինի շուրջօրյա՝ 24/7:

- Սպասարկման համար գործառնական ընդմիջումները չպետք է գերազանցեն ամսական 3 ժամը:
- Վեբ կայքի մշակումը պետք է արվի PHP 5.2.5, MySQl Ver. 14.12 Distrib 5.0.26, suse-linux (x86_64) readline 5.1. չափորոշիչներով:
- Պետք է օգտագործել լայնորեն տարածված բաց կոդով ծրագրային ապահովում՝ open source, CMS, Joomla, Drupal և այլն:
- Վեբ կայքը պետք է գործի հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով՝ օգտագործելով Unicode (UTF-8) նշված լեզուների կոդավորման համար:
  Վեբ կայքի գլխավոր էջի բացման արագությունը՝ ըստ օրական միջին հաճախականության, պետք է որոշվի սերվերի վերազինմամբ և ծրագրի ապահովման չափանիշների հիման վրա և չպետք է գերազանցի 5 վայրկյանը:
- Ավտոմատ թույլատրված սխալը՝ "404 Document Not Found" էջը, պետք է պարունակի սխալի վերաբերյալ նշում, տեղեկատվական տարրեր (նավիգացիոն մենյու, որոնման դաշտ) և կայքի քարտեզի հղում:
- Օգտագործողի կողմից տվյալների լրացման դաշտերում հնարավոր սխալների պաշտպանություն:
- Վեբ կայքը պետք է ունենա հետադարձ կապ՝ կայքի այցելուների կողմից համապատասխան ձևաչափերը լրացնելուց հետո պատասխան նամակ ստանալու հնարավորություն:
- Վեբ կայքը պետք է ունենա որոնման համակարգ, որի ֆունկցիոնալությունը պետք է տարածվի ողջ կայքի վրա:
- Վեբ կայքը պետք է ունենա Հաճախակի Տրվող Հարցերի (FAQ) բաժին:

5. Դիզայն

Դիզայնը պետք է համապատասխանի ՀՀ Կառավարության N 1521-Ն որոշմամբ սահմանված պետական մարմինների պաշտոնական վեբ կայքերի նվազագույն պահանջներին, այդ թվում՝

- Վեբ կայքի կառուցվածքը և տեղեկատվության արտացոլումը պետք է օպտիմիզացվի տարբեր հարթակների (բրաուզերներ, որոնման բոտեր/ engine bots/ և այլն) և սարքերի համար (համակարգիչ, մոբայլ, նոթեր և այլն):
- Վեբ կայքի գլխավոր էջը պետք է լինի պարզ և հասկանալի, պետք է պարունակի Ընկերությունը բնութագրող տեղեկատվություն, պետք է ունենա պատկերասրահ՝ սլայդերի տեսքով (ֆոտո):
- Որոնման համակարգի ֆունկցիոնալությունը պետք է տարածվի ողջ կայքի վրա:
- Կայք ներբեռնվող փաստաթղթերը ավտոմատ կերպով պետք է անվանափոխվեն՝ ստանալով օբյեկտի անվանը համապատասխան անվանում:

6. <u>Բովանդակության կառավարման համակարգ (CMS)</u>

- Վեբ կայքի Բովանդակության կառավարման համակարգը պետք է մատչելի լինի առանց որևէ տեխնիկական հմտության ադմինիստրատորների կառավարման համար:
- CMS-ը պետք է թույլ տա լիազորված աշխատակազմին կայքում ավելացնել, խմբագրել, ջնջել, ստեղծել նոր ենթամենյուներ, նաև աշխատել որոնման համակարգի բովանդակության հետ (տեքստային և մուլտիմեդիա):
- CMS-ը պետք է հնարավորություն ունենա աշխատելու 3 լեզուներով (հայերեն, անգլերեն և ռուսերեն): Նաև հնարավորություն ունենա անջատելու չօգտագործվող լեզուները:
- CMS-ը պետք է ադմինիստրատորին հնարավորություն տա կիրառելու WYSIWYG խմբագրիչը (ինչպես օրինակ՝ Microsoft Word), որը կապահովի տեքստերի հետ ճկուն աշխատանքը:
- CMS-ը պետք է համապատասխան գործիքներ տրամադրի վեբ կայքի պարունակությունը արխիվացնելու համար:

7. **Ստանդարտներ և նշումներ**

- HTML 5-ը պետք է կիրառվի որպես հիմնական (mark-up) լեզու, համատեղելի W3C-ի (https://www.w3.org/WAI/intro/wcag) հետ,
- CSS 3 պետք է կիրառվի style sheets-ի համար,
- Բացառվի Flash-ի կիրառումը կայքում:

8. **Համատեղելիություն**

Վեբ կայքը պետք է համատեղելի լինի բոլոր բրաուզերներում՝ Internet Explorer, Chrome, Mozilla Firefox, Safari, Opera և այլն:

9. **Կայքի կառուցվածքը**

Կայքը պետք է բաղկացած լինի հետևյալ բաժիններից (բլոկներից).

1) **Գլխավոր էջի բլոկ**, որը պետք է լինի հնարավորիս պարզ, մատչելի, արագ անհրաժեշտ տեղեկատվությունը գտնելու հնարավորությամբ: Գլխավոր էջում պետք է լինի կայքի այցելուներին ուղղված խոսք և ընկերության գործունեության մասին համառոտ տեղեկատվություն:

2) **Մենյուի բլոկ**՝ իր վայր ընկնող (drop-down) ենթամենյուներով, որը հասանելի կլինի կայքի բոլոր էջերից: Մենյուի բլոկում պետք է լինի՝
   - ✓ **Մեր մասին**
     - Տնօրինություն (Ընկերության ղեկավար մարմիններ)
     - Խորհրդի կազմ (Խորհրդի կազմի համառոտ ներկայացում)
     - Կանոնադրություն
     - Կառուցվածք (գրաֆիկական պատկերներ)
     - Պատմական ակնարկ (ստեղծման պատմություն)
     - Հիմնախնդիրներն ու գործառույթները
     - Էլեկտրաէներգիայի ավտոմատ հաշվառման համակարգ (ԷԱՀՀ)
     - Կապ (հասցե, հեռախոսահամար, քարտեզ՝ ընկերության գտնվելու վայր)
   - ✓ **Տեղեկատվություն**
     - Հաշվետվություններ
     - Ապրանքային արտադրանք
     - Ֆինանսական հաշվետվություններ

- Գնումների գործընթաց
- Սլայդներ, սխեմաներ,գրաֆիկներ, ֆոտոներ
- Փոխանակվող տեղեկատվություն

✓ **Իրավական ակտեր և նորմատիվներ**

- Օրենքներ
- Հրամաններ
- Տեխնիկական նորմատիվ փաստաթղթեր
- Պաշտոնական հրահանգներ

3) **Փոխադարձ ակտերի բլոկ՝** փոխադարձ ակտերի փոխանակման համար նախատեսված միջավայր է, որը նույնպես վայր ընկնող (drop-down) ենթամենյուներով է:

Օգտատերերը պետք է ունենան գրանցվելու, խմբագրելու, դիտելու, բեռնելու և ներբեռնելու հնարավորություն: Գրանցվել կարող են միայն Հաշվարկային կենտրոնի կողմից լիազորված անձիք՝ նախապես Ընկերությանը ներկայացնելով իրենց անձնական տվյալները ֆիզիկապես (հեռախոսահամար, էլ. հասցե, անձնագրային տվյալներ):

Փոխադարձ ակտերի բլոկը պետք է բաղկացած լինի հետևյալ մասերից.

✓ **Փոխադարձ ակտեր (մենյու)**

- **Արտադրող կայաններ**
  - ՓՀԷԿ-եր
  - ՀԱԷԿ
  - ՋԷԿ-եր
  - ՀԷԿ-եր
  - Արևային էլեկտրակայաններ
  - Հողմակայաններ
  - Կենսազանգվածից էլ. էներգիա արտադրող կայան
- **Էլեկտրական ցանցեր**
  - Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր
  - Բաշխիչ ցանցեր
- **Շուկայի այլ մասնակիցներ**
- **Հաշվարկային կենտրոն**

Փոխադարձ ակտերի բլոկի ***«Փոխադարձ ակտեր»*** մասը պետք է տեսանելի և հասանելի լինի միայն **Հաշվարկային կենտրոնի** կողմից արտոնված այցելուների համար՝ յուրաքանչյուրը միայն իրենց մասով անհրաժեշտ բաժինը խմբագրելու (ֆիլտրել, բեռնել, ներբեռնել, հեռացնել) հնարավորությամբ:

Հաշվարկային կենտրոնի համար տեսանելի և հասանելի են **Փոխադարձ ակտերի բլոկի** բոլոր մասերը, քանի որ Հաշվարկային կենտրոնը հանդես է գալիս որպես կայքի գլխավոր ադմինիստրատոր: Հաշվարկային կենտրոնի մասը պետք է ունենա բեռնելու, ներբեռնելու, խմբագրելու, ինչպես նաև՝ ֆիլտրելու հնարավորություն:

Փոխադարձ ակտերի բլոկի ***«Արտադրող կայանների»*** մասը տեսանելի և հասանելի է էլեկտրաէներգետիկական շուկայի մասնակիցների համար և որևէ կոնկրետ կայանի համար: Այն պետք է ունենա բեռնելու, ներբեռնելու, խմբագրելու և ֆիլտրելու հնարավորություն: Վերը նշվածը վերաբերվում է նաև ենթամենյուի բոլոր օբյեկտներին:

Փոխադարձ ակտերի բլոկի ***«Էլեկտրական ցանցերի»*** մասը պետք է տեսանելի և հասանելի լինի էլեկտրաէներգետիկական շուկայի մասնակիցների համար և յուրաքանչյուր կայանի համար առանձին վերցրած: Էլեկտրական ցանցերը պետք է ունենան բեռնելու, ներբեռնելու, խմբագրելու և ֆիլտրելու հնարավորություն:

Փոխադարձ ակտերի բլոկի «Ակտերի» մասը տեսանելի և հասանելի է բոլորի համար, սակայն, յուրաքանչյուրը կարող է տեսնել միայն իրեն վերաբերվող փաստաթղթերը: **Ակտերի** մասը պետք է ունենա բեռնելու, ներբեռնելու, խմբագրելու և ֆիլտրելու հնարավորություն:

4) **Փնտրման բլոկ (Search)**՝ որի ֆունկցիոնալությունը պետք է տարածվի ամբողջ վեբ կայքի վրա (բոլոր բլոկները ներառյալ):

10. Անվտանգություն

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի վեբ կայքի անվտանգությունը պետք է ապահովվի համաձայն *ՀՀ Կառավարության 26.12.2013թ.* թիվ 1521-Ն *որոշմամբ սահմանված կարգի: Հղումը՝* http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=88785

11. Վերապատրաստում

Կայքի պաշտոնական մեկնարկից հետո «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի աշխատակազմի վեբ կայքը վարելու վերապատրաստումը պետք է իրականացվի Մատակարարի կողմից՝ գործնական վարժությունների միջոցով, որոնք հնարավորություն կտան Պատվիրատուին ստանձնելու վեբ կայքի սպասարկման և վարման պարտականությունների ամբողջական շրջանակը:

12. Աջակցում և սպասարկում

Պետք է ապահովվի վեբ կայքի 1 տարվա տեխնիկական աջակցություն: Hosting provider-ի կողմից MySQL և PHP-ի թարմացման դեպքում Մատակարարը պետք է ապահովի վեբ կայքի նորմալ աշխատանքը:

13. Դոմենի անվանումը և հոսթինգ

Վեբ կայքի դոմենը **setcenter.am** է: Հոսթինգի հետ կապված ծառայությունները պետք է ապահովվեն ՀՀ Ազգային Անվտանգության ծառայության կողմից: Արդեն պատրաստ վեբ կայքը պետք է միանա hosting provider-ի սերվերին HRDO /setcenter/-ի միջոցով: Մատակարարը չի կարող ունենալ ուղիղ մուտքի իրավունք hosting provider-ի սերվերին:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Հաշվարկային Կենտրոն» ՓԲԸ	«Սայբեր Վիժն Դիվելոփմենթ Ստուդիո» ՍՊԸ
ք. Երևան, Աբովյան 27	ք. Երևան, Հակոբ Հակոբյան 3
«Կոնվերս բանկ» ՓԲԸ	«Ամերիա բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930000600150100	Հ/Հ 1570027781220100
ՀՎՀՀ 01544167	ՀՎՀՀ 00173708
Մ. Ջալալյան_____	Մ. Պահլավունի_____
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 2

«02» 08 2018թ. կնքված

ՀԿՓԲԸ-ՄԱԾՁԲ-18/09 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

	Ծառայության						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների				
			սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72411300	վեբ կայքի պատրաստման և ձևավորման	860 000	860 000	860 000	860 000	**860 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հաշվարկային Կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան, Աբովյան 27
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930000600150100
ՀՎՀՀ 01544167

Մ. Ջալալյան

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Սայբեր Վիժն Դիվելոփմենթ Ստուդիո» ՍՊԸ
ք. Երևան, Հակոբ Հակոբյան 3
«Ամերիա բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570027781220100
ՀՎՀՀ 00173708

Մ. Պահլավունի

Կ.Տ